Նարեկ Սարգսյան

Խաբկանքի մեջ ապրողը

Երևանում ժամը 11:00-ի սահմաններում էր: Կարենն արագ քայլելով շտապում էր սրճարան՝ հանդիպման: Նա միջահասակ, անխնա մորուքով, թուխ մաշկով, հաստ ունքերով և սև աչքերով 35 տարեկան տղամարդ էր, ամուսնացած չէր, չուներ երեխաներ:

Ներս մտնելով սրճարան՝ տեսավ, որ իր նախկին համադասարանցի Արմենը սպասում էր իրեն՝ սեղաններից մեկում նստած:

Արմենը փոքրամարմին, միջահասակ, ակնոց կրող տղամարդ էր՝ հանգիստ ու համեստ բնավորությամբ:

-Բարև, ախպե՛րս, ո՞նց ես,-ոգևորված ու ուրախ ձայնով ասաց Կարենը:

-Լավ եմ, Կարեն, ջան, այդ ի՞նչ կա, որ ինձ հիշել ես, ախր երկար տարիներ ինձանով չես հետաքրքրվել, ի՞նչ ա պատահել, որ երեկ զանգեցիր ու ասացիր, որ հետս խոսելու բան ունես,-հետաքրքրությամբ հարցրեց Արմենը:

-Դե, ախպերս, նենց չի, որ այս տարիներին քեզ մոռացել էի, պարզապես գլուխս միշտ խառն էր ու չէր հարմարվում:

-Իսկ էսօր հարմարվե՞լ է:

-Հա, ախպե՛րս, ասցի քեզ հետ նստեմ, խոսամ, տենամ, ոնց ես, ի՞նչ ես անում, ինչո՞վ ես զբաղված,-ձայնին ու շարժուձևին անկեղծ արտահայտչականություն

տալով՝ ասաց Կարենը:

-Կարե՛ն ջան, ես լավ եմ, գործերս հաջող են ընթանում: Նրանց է մոտենում մատուցողուհին .

-Ի՞նչ եք ցանկանում պատվիրել:

-Ես մի բակալ պիվա, իսկ մեր ախպերը թող ինքն ասի:

-Ես մի բաժակ սուրճ կխմեմ,-ասաց Արմենը:

-Ախպեր, հետս չե՞ս ուզում խմել:

-Ոչ թե չեմ ուզում քեզ հետ խմել, այլ ես ընդհանրապես խմիչք չեմ օգտագործում:

-Տենում եմ, դու չես փոխվել, նույն Արմենն ես մնացել:

<<Տեսնես սա ինչի՞ համար ա ինձ կանչել, ո՞րն ա սրա փորացավը>>,-մտածում էր Արմենը:

-Արմե՛ն, դու հիմա ինչո՞վ ես զբաղված, ո՞րտեղ ես աշխատում:

-Ես մեքենայական ուսուցման ինժեներ եմ:

-Էդ ո՞րն ա,-զարմացած հարցրեց Կարենը:

-Ախր, որ հիմա քեզ բացատրեմ, չես հասկանա:

-Ինչի՞ ախպեր, ես էդքան չհասկացողի տպավորությո՞ն եմ թողնում,-անբարյացակամ ու դժգոհ տոնով ասաց Կարենը:

-Չէ, Կարեն ջան, պարզապես դա նեղ մասնագիտական ա, դու չես առնչվել:

-Իսկ դա կապ ունի չէ՞ մաթեմատիկայի ու բանաձևերի հետ, ախպեր:

-Իհարկե:

-Արմեն ջան, քեզ ուզում եմ մի բան հարցնել,-սիրաշահող ձայնի տոնով ու միմիկայով ասաց Կարենը:

-Հարցրու՛,-հետաքրքրությամբ ասաց Արմենը:

-Ախպեր, ո՞նց կարանք էդ քո մաթեմատիկական բանաձևերով ու խելքով, կազինոյում մեծ փողեր բռնենք:

<<Ա՛, փաստորեն սա ինձ դրա համար ա կանչել, ուզում ա ինձանից մարտավարություններ իմանա, թե ինչպես մեծ գումար աշխատի: Ախր ես գիտեի, որ մի բան կա: Սա հենց էնպես ինձ չէր կանչի ու կապիկություն չէր անի>>,-մտածեց Արմենը:

-Կարեն ջան, եթե էդպես լիներ, ես ինչու՞ եմ գնում աշխատանքի, եթե էդպիսի ձև կա: Հենա կնստեմ ինձ համար գումարներ կաշխատեմ:

-Դե Արմեն, մարդ կա չի սիրում խաղալ:

-Կարեն ջան, իհարկե կազինոյում կան բազմաթիվ մարտավարություններ, որոնք ինչ որ կարճ ժամանակահատվածում արդյունք են ապահովում, բայց երկարատև ժամանակահատվածի կտրվածքով, միևնույնն է, մինուսով դուրս կգաս: Էնպես որ չկա էնպիսի մարտավարություն կամ բանաձև, որ երկարատև կտրվածքով թույլ տար պլյուսով լինել: Ի՞նչ ես կարծում, եթե էդպիսի մարտավարություններ լինեին, կազինոները կշարունակե՞ին իրենց գործունեությունը:

-Ահա ձեր գարեջուրը և ձեր սուրճը,-զրույցն ընդհատեց մատուցողին, ով բերեց պատվերը:

-Քուրս, էս ինչու՞ էսքան ուշացրիր, բերանս չորացավ, տնաշեն,-դժգոհ ու կոպիտ տոնով հարցրեց Կարենը:

-Կներեք, բայց այսօր ես մենակ եմ աշխատում: Ես պետք է հասցնեմ նաև մյուս սեղանների պատվերներ էլ կատարեմ,-փոքր ինչ ընկճված տոնով ասաց մատուցողին:

-Արա, բայց լավ ֆիգուրա ունի,-մատուցողուհու հետևից ուշադիր նայելով՝ ասաց Կարենը:

-Կարեն, անհարմար է, վերջացրու, կլսի:

-Էդ կարող ա դուրդ եկալ ա, ախպեր . . .

-Չէ, դուրս չի եկել, պարզապես նման անհամ բաներ չեմ սիրում:

-Լավ, ախպերս: Բայց լսիր, սաղ յութուբը վիդեո ա էն մասին, որտեղ ասում են, թե ոնց կարելի ա մեծ գումարներ բռնել կազինոյում: Դու էլ եկել ասում ես, որ տենց բան չկա, էդ ո՞նց ախպեր . . . Լսիր, թե քո փայն ես ուզում, ասա՛, պայմանավորվենք . .

-Կարեն, ինձ քեզանից ոչինչ պետք չի: Հարց ես տալիս, ես էլ պատասխանում եմ:

-Բայց ախպեր ո՞նց կարա տենց ձև չլինի, ախր ինտերնետում անընդհատ մարդկանց անուններ են տալիս, որ էսինչը մաթեմատիկական հաշվարկների միջոցով մեծ գումարներ ա շահել ու տենց բաներ,-ասաց Կարենը ագահաբար կոնծելով գարեջուրը:

-Լսիր Կարեն ջան,-հանգիստ տոնով ասաց Արմենը,-ինտերնետ շահումով խաղերում, դա լինի կազինո, թե սպորտային իրադարձությունների խաղադրույքներ, բուքմեյքերը կամ կազինոն կիրառում ա միջնորդավճար կամ այլ կերպ ասած մարժա, ինչը երկարատև ժամանակահատվածի կտրվածքով միշտ ապահովում ա բուքմեյքերի կամ կազինոյի առավելությունը: Ավելի պարզ ասած՝ ի սկզբանե բուքմեյքերը կամ կազինոն ունեն մաթեմատիկական առավելություն: Երկար ժամանակահատվածով խաղալու դեպքում այդ առավելությունն անպայման դրսևորվում ա, ու խաղացողը կորցնում ա իր գումարները:

-Ախպեր, հայերեն խոսա, ես քո ասածներից ոչ մի բան չհասկացա:

<<Հլը ես կռիսին նայիր, չի ուզում ասի: Դե տակից էլ էսի կռիս ա եղել, չուզող: Մոռացել ա դպրոցական անցյալը, որ ես իրեն պաշտպանում էի, որ տղերքը չտփեն, հիմի մարդ ա դառել>>,-մտածեց Կարենը:

-Կարեն, ըստ քեզ կազինոները ինչու՞ են աշխատում,-հարցրեց Արմենը:

-Դե էսի՞մ ախպեր, ուզում են մարդկանց զբաղեցնել,-պատասխանեց Կարենը՝ չհասկանալով, թե Արմենն այդ հարցն իրեն ի՞նչ նպատակով տվեց:

-Կարեն, հիմա ասա, թե ինչքան փող ես ուզում շահել ու ի՞նչի վրա ես մտադիր ծախսել,-հետաքրքրությամբ հարցրեց Արմենը:

-Դե ախպեր, ուզում եմ թունդ մաշնա առնել, մնացածն էլ ձեռքի ծախս, դե գիտես: Մի խոսքով, ինչքան շատ գումար լինի, էնքան լավ: Ոնց ասում են, շատություն թող անի, բայց քչություն չանի:

-Եթե մեքենա ես ուզում առնել, մի տեղ աշխատանքի տեղավորվի, վարկով վերցրու: Էլ ի՞նչ ես սար ու ձոր ընկել:

-Ախպեր, չեմ ջոգում դու Մարսի՞ց ես իջել,- բարկացած արձագանքեց Կարենը,- խի դու չգիտե՞ս, որ նորմալ գործ չկա էս անտեր պետությունում: Կարող ա գիտես իմ նման տղեն պիտի գնա բանվորություն անի կամ պահակություն անի:

-Լավ հասկանալի ա,-հազիվ ծիծաղը զսպելով՝ ասաց Արմենը:

-Դե որ հասկանալի ա, մյուս անգամ նման բաներ չասես, ախպեր:

-Կարեն, բա դուք ինչո՞վ եք ապրում:

-Դե ծնողներս թոշակ են ստանում, հերս էլ բացի թոշակից խանութում բեռ ա դատարկում:

-Պարզ ա:

-Ինչն ա՞ պարզ, այ ախպեր, դու ինչի չե՞ս ասում շահելու գաղտնիքը:

-Ախր այ Կարեն ջան, ոչ մի գաղտնիք էլ չկա:

-Բա էդ յութուբի վիդեոնները ըստ քեզ, սու՞տ ա, բա էդ հոդվածները գուգլում սու՞տ ա: Լավ, ենթադրենք մեկը կարա սուտ գրի, բա մյու՞սները: Ապեր, մենք լոխ չենք, որ չհասկանանք: Ձևեր կան, ուղղակի դու չես ուզում ասել:

-Ինտերնետում շատ բան կարան գրեն ու շատ բանից խոսեն, բայց էդ չի նշանակում, որ ճիշտ ա: Հետո էլ չի բացառվում, որ բուքմեյքները կամ կազինոյի տերերը կարող ա վճարած լինեն վլոգերներին, որ նման տեսակի վիդեոներ նկարեն:

-Վլոգերը ի՞նչ ա, մարդավարի խոսիր, բան հասկանամ:

-Վլոգերը վիդեո նկարահանողը և յութուբում տեղադրողն ա: Հանկարծ զանգում են Կարենին .

-Ասա, ախպե՛րս,- պատասխանելով հեռախոսազանգին՝ ասաց Կարենը:

-Կա՛ր, յութուբում մի թունդ վիդեո եմ չարել, որտեղ ասվում ա, թե ո՞նց կարելի ա մեծ գումար շահել կազինոյում: Ապեր, հրաշք վիդեո ա, ես արդեն էդ տեխնիկան փորձել եմ ու արդեն փող եմ շահել: Դու ու՞ր ես հիմի:

-Սամո՛, հեսա գալիս եմ ձեր տուն, տա՞ննս ես չէ լինելու:

-Հա, ախպեր տանն եմ լինելու, ու՞ր պիտի գնամ, պիտի տանը նստեմ ու խաղամ էս նոր տեխնիկայով:

-Ու՛խ, ես քո ցավը տանեմ: Դե լավ, ախպեր, հենց հիմի գալիս եմ,-ավարտելով հեռախոսազրույցը՝ Կարենը տեղից արագ վեր կացավ ու Արմենին առանց հրաժեշտ տալու՝ հեռացավ:

-Դուք նոր բան կցանկանա՞ք,-մոտեցավ մատուցողուհին Արմենին:

-Ոչ, շնորհակալ եմ: Բերեք հաշիվը, խնդրում եմ:

-Շատ լավ:

Հաշիվը վճարելուց հետո Արմենը դուրս եկավ սրճարանից: Կարենի հետ զրույցից տհաճ զգացողություններ էին արթնացել իր մեջ: Երբ Կարենը նրան զանգահարել էր, թեև չէր ցանկացել հանդիպել , բայց և չէր կարողացել մերժել:

<<Ժամանակի ավելորդ կորուստ ունեցա էդ հիմարի հետ հանդիպելով>>,-մտածեց ու գնաց տուն: